ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«18» մարտ 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-02/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.03.2015թ. թիվ 1/73-1/85453-15, 25.01.2016թ. թիվ 1/73-1/1989-16 և 04.03.2016թ. թիվ 1/73-1/8493-16 գրություններով ներկայացված «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.03.2015թ. թիվ 1/73-1/85453-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցա-

կում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.01.2016թ. թիվ 1/73-1/1989-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ առաջարկելով ուսումնասիրել Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.03.2016թ. թիվ 1/73-1/8493-16 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ հայտնելով, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ անհրաժեշտ է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին ներառելու ընթացակարգ:

2. «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 20.03.2015թ. թիվ 09/032-500, 27.01.2016թ. թիվ 01/04.1/179-16 գրություններով դիմել է «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին:

ա) Ի պատասխան Կենտրոնի 20.03.2015թ. N 09/032-500 գրությանը՝ Ընկերությունը 24.03.2015թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Միևնույն ժամանակ Ընկերությունը գրությամբ հայտնել է, որ նշված ընթացակարգից բացի մեկ այլ գնման ընթացակարգով որպես ընտրված մասնակից չի հրաժարվել հետագա մասնակցությունից:

բ) Ի պատասխան Կենտրոնի 27.01.2016թ. թիվ 01/04.1/179-16 գրության՝ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն 04.02.2016թ. հայտնել է, որ Ընկերությունը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակցության հայտից հրաժարվել է մատակարարի

կողմից ապրանքների մատակարարման էական պայմանների փոփոխման պատճառով, որով անհնարին էր դարձել ընթացակարգին մասնակցելը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ա) ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.03.2015թ. N ԴՎԱ/491 գրությամբ Կենտրոնին ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի 11.02.2015թ. գրությունը, որով Ընկերությունը խնդրել է անվավեր համարել նշված ընթացակարգին ներկայացված հայտը, հիմնավորմամբ, որ Ընկերությունը չի կարող մատակարարել հավի ձուն հայտում նշված գներով, ինչպես նաև Ընկերության՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 16.02.2015թ. գրությունը, որով Ընկերությունը հրաժարվել է հայտով ներկայացված 30-ական հավի ձվի և 6-ական հավի ձվի մատակարարման պայմանագիր կնքելուց:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ ներկայացրել է Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

բ) Պատվիրատուն Կենտրոնին ուղղված 15.01.2016թ. թիվ ԴՎԱ/31 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ է ներկայացրել «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն, որը, սակայն վերը նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 15.12.2015թ. ներկայացրել է գրություն՝ խնդրելով չեղյալ համարել ներկայացված գնային առաջարկը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ ներկայացրել է Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

գ) ՀՀ պաշտպանության նախարարությունը Կենտրոնին ուղղված 09.03.2016թ. թիվ ԴՎԱ/539 գրությամբ հայտնել է, որ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն 23.02.2016թ. հայտ է ներկայացրել Պատվիրատուի կարիքների համար հեղուկ վառելիքի գնման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգին:

Կենտրոնում 16.03.2016թ. 17:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-02/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչները պնդել են գրություններով ներկայացրած դիրքորոշումները:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-02/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 10.03.2015թ. թիվ 1/73-1/85453-15, 25.01.2016թ. թիվ 1/73-1/1989-16 և 04.03.2016թ. թիվ 1/73-1/8493-16 գրություններով ներկայացված «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն հայտերի բացման նիստից հետո ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված ***<u>11.02.2015թ. գրությամբ դադարեցրել է ընթացակարգին՝ Ընկերության հետագա մասնակցությունը:</u>***

2. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ՀՀ ֆինանսների նախարարության 11.03.2015թ. թիվ 1/73-1/785453-15 գրության հիման վրա, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.03.2015թ. թիվ 01/04.1/1493-15 գրությամբ արձանագրել է, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի խախտում:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն հայտերի բացման նիստից հետո ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված ***<u>15.12.2015թ. գրությամբ դադարեցրել է ընթացակարգին՝ Ընկերության հետագա մասնակցությունը:</u>***

4. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2016թ թիվ 1/73-1/1989-16 գրության հիման վրա, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.03.2016թ. թիվ 01/04.1/802-16 գրությամբ արձանագրել է, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի խախտում:

5. «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ***23.02.2016թ. հայտ է ներկայացրել:***

5. ՍՑ-ԳԲԽ-02/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի 24.03.2015թ., 04.02.2016թ գրությունները և կից փաստաթղթերը, Պատվիրատուի 10.03.2015թ. N ԴՎԱ/491, 15.01.2016թ. թիվ ԴՎԱ/31 և 09.03.2016թ. թիվ ԴՎԱ/539 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ 3-րդ մասի համաձայն՝ ***շրջանակային համաձայնագրերի կնքման դեպքում հայտի ապահովման չափը հավասար է գնումների բազային միավորին***:

Կարգի 125-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամսվանից մինչև մեկ տարի ժամկետով՝

ա. եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ տուժանքը, հաշվարկված վնասը, տույժը կամ տուգանքը վերականգնվել է:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված ***<u>11.02.2015թ. գրությամբ դադարեցրել է ընթացակարգին՝ Ընկերության հետագա մասնակցությունը՝ հայտնելով,</u>*** որ հանգամանքների բերումով Ընկերությունը չի կարող մատակարարել ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար առաջարկված 30-ական հավի ձուն և 6-ական հավի ձուն գնային առաջարկում նշված գներով:

Կենտրոնը, ՀՀ ֆինանսների նախարարության 11.03.2015թ. թիվ 1/73-1/785453-15 գրության հիման վրա, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.03.2015թ. թիվ 01/04.1/1493-15 գրությամբ արձանագրել է, որ Ընկերությունը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի խախտում: Միևնույն

ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ անգամ, Կենտրոնը հիշյալ գրությամբ հայտնել է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

«ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն, մասնակցելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ***15.12.2015թ.*** ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված ***գրությամբ դադարեցրել է ընթացակարգին՝ Ընկերության հետագա մասնակցությունը՝*** հայտնելով, որ Ընկերությունը ընթացակարգի մասնակցության հայտով ներկայացրել է գնային առաջարկ՝ ավտոբենզին «Ռեգուլյար», ավտոբենզին «Պրեմիում», դիզելային վառելիք ամառային և դիզելային վառելիք ձմեռային ապրանքատեսակների (չափաբաժիններ) համար, սակայն վերահաշվարկ կատարելուց հետո, պարզ է դարձել, որ Ընկերությունը հնարավորություն չի ունենա գնային առաջարկում նշված գներով մատակարարել վերը նշված ապրանքատեսակները:

Ընկերությունը գնահատող հանձնաժողովին խնդրել է ամբողջությամբ չեղյալ հայտարարել ներկայացված գնային առաջարկը:

Կենտրոնը, ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2016թ թիվ 1/73-1/1989-16 գրության հիման վրա, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.03.2016թ. թիվ 01/04.1/802-16 գրությամբ արձանագրել է, որ Ընկերությունը կրկին թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի խախտում:

Այսպիսով Կենտրոնը արձանագրել է, որ ***«ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն մեկ տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը և*** նման պայմաններում խախտումը թույլ տալու պահից (վերջինը՝ 15.12.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Կենտրոնին ուղղված 09.03.2016թ. թիվ ԴՎԱ/539 գրությամբ հայտնել է, որ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ***23.02.2016թ. հայտ է ներկայացրել:***

Այսպիսով, գտնում ենք, որ Ընկերության կողմից ավելի քան մեկ անգամ գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտման և մեկ տարվա ընթացքում կրկին հայտ ներկայացնելու փաստը հիմք է «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2016թ. թիվ 1/73-1/8493-16 գրությամբ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված տասնմեկ ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-02/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան